ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

22.11.17 N 29/14465-17
Ձեր N

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՄԱՐԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Խաչատրյան

Ի պատասխան 13.11.2017 թվականի Ձեր հարցմանը, ցանկանում ենք տեղեկացնել, որ Առողջապահության նախարարությունը ողջունում է Ձեր հետաքրքրությունը հանրային առողջապահության ոլորտի վերաբերյալ և հավաստիացնում, որ Առողջապահության նախարարության կողմից խիստ կարևորվում է պետություն-հասարակություն ակտիվ համագործակցությունը, քանզի վերջինս առողջ հասարակություն ունենալու գրավականներից է:

Ստորև ներկայացվում են պարզաբանումներն ըստ Ձեր հարցադրումների.

1. Ինչ՞ու է պատվաստանյութի մեկ դեղաչափի արժեքը Հայաստանի Հանրապետության համար 4,5 ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ դրա շուկայական արժեքը միջինում կազմում է 100-120 ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը պատվաստանյութը ներկրել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջոցով՝ Պատվաստանյութերի և պատվաստումների գլոբալ դաշինքի (ԳԱՎԻ) ֆինանսավորմամբ: Դա է պատճառը, որ Գարդասիլ պատվաստանյութի մեկ դեղաչափի արժեքը 4,5 ԱՄՆ դոլար է:

2. Ինչ՞ու է պատվաստում իրականացվում միայն 13 տարեկան աղջիկների շրջանում, այն դեպքում, երբ ըստ ուղեցույցների պետք է պատվաստվեն 9-14 տարեկան աղջիկները:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է ՄՊՎ-ի դեմ պատվաստումներն իրականացնել 9-14 տարեկան աղջիկների շրջանում: ԳԱՎԻ քաղաքականության համաձայն՝ երկրներին աջակցություն է տրամադրվում միայն մեկ տարիքային խմբի համար: ՀՀ առողջապահության նախարարությունը որոշում է կայացրել պատվաստումներն իրականացնել 13 տարեկան աղջիկների շրջանում:

3. Ի՞նչ հիմքով է ընտրվել միայն 13 տարեկան աղջիկների 16 հազար պոպուլյացիան:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է ՄՊՎ-ի դեմ պատվաստումներն իրականացնել 9-14 տարեկան աղջիկների շրջանում: ԳԱՎԻ քաղաքականության համաձայն՝ երկրներին աջակցություն է տրամադրվում միայն մեկ տարիքային խմբի համար: ՀՀ առողջապահության նախարարությունը որոշում է կայացրել պատվաստումներն իրականացնել 13 տարեկան աղջիկների շրջանում:

4. Արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի՞նչ այլ միջոցառումներ են իրականացվում:

Արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելումը համալիր միջոցառում է, որն իր մեջ ներառում է ՄՊՎ-ի դեմ կանխարգելիչ պատվաստումների իրականացում, որպես առաջնային կանխարգելում, և արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների և քաղցկեղի հայտնաբերման սկրինինգային հետազոտություն, որպես երկրորդային կանխարգելում: Առողջապահության նախարարությունը 30-60 տարեկան կանանց շրջանում իրականացնում է արգանդի պարանոցի նախաքաղցկեղային վիճակների և քաղցկեղի հայտնաբերման սկրինինգային հետազոտություն (ՊԱՊ թեստ):

Արդյոք Գարդասիլ 4 պատվաստանյութի ձեռքբերման ժամանակ պահպանվել են գնումների մասին օրենքի դրույթները: Եթե այո, ապա ինչ հիմքերով է ընտրվել Գարդասիլ 4-ը, այլ ոչ թե Գարդասիլ 9-ը կամ Ցերվարիքսը:

Գարդասիլ պատվաստանյութի գնման գործընթաց չի իրականացվել: Պատվաստանյութը հանրապետություն ներկրվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջոցով՝ Պատվաստանյութերի և պատվաստումների գլոբալ դաշինքի (ԳԱՎԻ) ֆինանսավորմամբ:

5. Ինչո՞ւ է իրականացվում պատվաստում քառավալենտ Գարդասիլով, եթե շուկայում առկա է իննավալենտ Գարդասիլ:

Գարդասիլ քառավալենտ պատվաստանյութը Հայաստանի Հանրապետություն է ներկրվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջոցով՝ Պատվաստանյութերի և պատվաստումների գլոբալ դաշինքի (ԳԱՎԻ) ֆինանսավորմամբ:

6. Մինչև ե՞րբ է ձեռքբերված պատվաստանյութի պիտանելիության ժամկետը (հնարավորության դեպքում խնդրում եմ տրամադրել պատվաստանյութի նմուշ):

Հայաստանի Հանրապետություն ներկրված Գարդասիլ քառավալենտ պատվաստանյութի ժամկետը մինչև 12.10.2019 թ.:

7. Ե՞րբ է կնքվել պայմանագիրը՝ պատվաստանյութն արտադրող և/կամ մատակարարող կազմակերպության հետ (խնդրում եմ տրամադրել պայմանագրի օրինակը)

Գարդասիլ պատվաստանյութի գնման գործընթաց չի իրականացվել, հետևաբար պատվաստանյութն արտադրող և/կամ մատակարարող կազմակերպության հետ պայմանագիր չի կնքվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ